



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԵՆՑԱՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Չարենցավան 2501,
Կ.Դեմիրճյանի անվ. հրապարակ 1,
Հեռ.՝ (226) 43434,
Էլ. փոստ՝ charentsavan.kotayq@mta.gov.am

N 114-22
27 հունվար 2022թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

21.01.2022թ.

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենքի համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ 2022 թվականի հունվարի 21-ին՝ ժամը 11:00-ին, Չարենցավանի համայնքապետարանում տեղի ունեցավ «Սուլիձոր-3» ՍՊԸ-ի կողմից ձեռնարկվող՝ Բջնիի մարմարի հանքավայրի «Սուլիձոր» տեղամասի շահագործման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային առաջին քննարկումը:

Մասնակցում էին «Սուլիձոր-3» ՍՊԸ-ի տնօրեն Եղիշե Մովսիսյանը, ազդակիր համայնքների վարչական ղեկավարներ, համայնքապետարանի մասնագետներ, բնակիչներ:

Եղիշե Մովսիսյան-«Սուլիձոր-3» ՍՊԸ-ի տնօրեն -նշեց, որ հանքը գտնվում է Արզականում, սակայն խոշորացումից հետո՝ նոր վարչատարածքային բաժանումով ընկնում է Բջնիի տարածքում: Մարմարի հանքավայր է: Շահագործվելու է տրակտորների, էքսկավատորների միջոցով՝ ջրի ուղեկցությամբ, ինչը թույլ չի տալու փոշու՝ սահմանված թույլատրելի մակարդակն անցնել: Կա ճանապարհի դեպի հանքավայր, որն իրենք մշտապես նորոգում են: Դրանից օգտվում են նաև գյուղի բնակիչները՝ անտառ բարձրանալու համար: Շինանյութն օգտագործվելու է շինարարության մեջ, իսկ մարմարի ավազը՝ թոչնաբուծական ֆերմաներում՝ որպես կերանյութ: Հաստատված պաշարները կազմում են 1250քմ:

Բնակիչ-30-ական թվականներից գործում է հանքը և ոչնչով չի խանգարել գյուղին:
Մարմարը Արզականի բրենդն է: Ի սկզբանե թվում էր թե հանքն ու Աղվերանի
հանգստյան գոտին անհամատեղելի են, սակայն դա այդպես չէ:


Լիպարիտ Մարգարյան-Արզականի վարչական ղեկավար-Բնակավայրերից հանքը
հեռու է 4-5կմ, բարձրադիր գոտում է գտնվում:

Հովհաննես Անդրեասյան-Բջնիի վարչական ղեկավար-Հետաքրքրվեց սոցիալական
ծրագրերով՝ նշելով, որ բնապահպանական խնդիրներն իրենք չեն կարող
քննարկել, դա կիրականացնի համապատասխան գերատեսչությունը:

Եղիշե Մովսիսյան-«Սուլիձոր-3» ՍՊԸ-ի տնօրեն- Իրենք մշտապես իրենց
գործունեության ընթացքում եղել են գյուղի կողքին և շարունակելու են
սոցիալական ծրագրերով աջակցել ամբողջ համայնքին:

Հանրային քննարկման վերջում ներկաները կողմ արտահայտվեցին սպասվելիք
տնտեսական գործունեությանը:

Քննարկումների
պատասխանատու՝




համայնքի ղեկավար Հակոբ Շահգալոյան

Վարող և արձանագրող



Հասարակայնության հետ կապերի բաժնի
պետ Սաթենիկ Բալաբեկյան

«Սուլիձոր-3» ՍՊԸ-ի տնօրեն-



Եղիշե Մովսիսյան